

Տարօրինակը այն է, որ միշտ խօսի, ու խօսի ինքը միայն: Հարցումը նեղութիւն մըն է անոր համար: Նա-խապաշարումը ունի զայն միջամտութիւն մը նկատելու անպատրաստ մարդոց կողմէ, որոնք կը կազմեն մաս-սան: Քիչ եւ յատուկ անունները, յեղափոխական պե-տերէ, իր խօսածին մէջ (աւելի յետոյ պիտի իմանայի այս կծծիութեան զսպանակը, որ խորունկ նախանձ մըն էր իսկապէս ժողովրդական գործիչներէն) ու շրջաններէ, որոնք յեղափոխական գործունէութեան թատր կը դառ-նան նոյնիսկ այդ օրերուն, ինչպէս հազար վտանգով ձեռք ձգուած թերթ մը կը պատմէր ամսէ ամիս:

Կը խօսի անսպառ եռանդով, տեսակէտներու բազ-մազան առատութեամբ, ամէն հարցի մասին ընդարձակ ներածումով, իբրեւ բժիշկ եւ «սոցիոլոկ»: Չի նայիր խօսակիցին, լայն ըլլալու առաջին պայմանը:

Դժուար է զինքը համոզել սա զգուշութեանց ան-հրաժեշտ պէտքին դիմաց: Զղջացած է զիս մտիկ ընելուն: Յայտնապէս կը տառապի ան, վասնզի հեռու կը գտնէ ինքզինքը ժողովուրդէն, որուն խօսիլն է, զոր խանդա-վառելն է իր կոչումը: Ան չ'ընդունիր գեղին բացառիկ դրութիւնը. այդ առարկութեան հանդիպած ըլլալուն Ալիս գետէն ասդին, բոլոր գեղերուն ալ մէջը: Վստահ է գեղապետին, տղուն եւ իմ վրայ, քանի որ մեր անունները ծանօթ են իրեն: Մեծ խանդավառութեամբ, դանդաղօրէն կը դիմէ փոքր տետրակի մը, որ թիւեր միայն կը պարու-նակէ եւ որոնք կը կարդայ գեղի ու մարդու անուններով: Ունի մտադրութիւն այցելել նաեւ Նիկիոյ շրջանը, ուր ցրուած գեղերուն բնակչութեան ու բարքերու մասին գի-տէ լայն ու լուրջ բաներ: Ուշագրաւ է ճիշդ իր արտասա-նութիւնը, որքան տեղագրական ընդարձակ ծանօթու-թիւնները: Ա՛յնքան՝ որ կը վախճամ իր աղբիւրներով հետաքրքրուելէ:

Վիմափոր խրճիթին ապահովութի՞ւնը, թէ աւելի նուրբ, ումանթիկ այլուրութիւն մը կը միջամտեն սա պահին, որպէսզի անոր մտածումները, փորձառական դի-